Արձանագրություն 3

«ԳԵՂԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ» ՀԿՀ-ի կարիքների համար «ՀՀ-ՍՄԳՀ-ԳՀԱՇՁԲ -17/2» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 12.10.2017թ. ժամը 10:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Վ.Գրիգորյան – Գեղի համայնքի ղեկավար

Անդամներ

Մ.Առուստամյան - «Գեղիի համայնքապետարան» ՀԿՀ-ի առաջատար մասնագետ-հաշվապահ

Մ. Հարությունյան - «Գեղիի համայնքապետարան» ՀԿՀ-ի սոց.աշխատող

Քարտուղար-գնումների համակարգող

Ա.Գևորգյան - «Գեղիի համայնքապետարան» ՀԿՀ-ի աշխատակազմի քարտուղար

1. <u>ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին</u>

1. Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարության պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

1.2 «ՀՀ-ՍՄԳՀ-ԳՀԱՇՁԲ -17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ գրված մասնակից ճանաչված «ԳՈՐԻՍԻ ԷՑՇ» ԲԲԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում 11.10.2017թ.) ներկայացվել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը.

-Հանձնաժողովի քարտուղարը ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

-Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. <u>Գնանշման հարցման ընթաղակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին</u>

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ-ՍՄԳՀ-ԳՀԱՇՁԲ -17/2»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ԳՈՐԻՍԻ ԷՑՇ» ԲԲԸ	բավարար

-Մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. <u>Հաստատել «ՀՀ-ՍՄԳՀ-ԳՀԱՇՁԲ -17/2» գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին</u>

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՀՀ-ՍՄԳՀ-ԳՀԱՇՁԲ -17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ԳՈՐԻՍԻ ԷՑՇ» ԲԲԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. <u>Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին</u>

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը՝

- «ԳՈՐԻՍԻ ԷՑՇ» ԲԲԸ -ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել 6 778 600 (վեց միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով:

4.2 հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, անգործության ժամկետ սահմանել հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0

5. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին</u>

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:30-ին, «Գեղիի համայնքապետարան» ՀԿՀ-ի շենքում, հասցե՝ գ.Գեղի, 2-րդ փողոց, շենք 5:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Գրիգորյան

Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Հարությունյան

Մ.Առուստամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Գևորգյան